



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՉԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՅՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

### Ս. ԾՆՆՂԵԱՆ ՅՈՅՍԱԸ՝ ԱՂԲԻՐ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

*«Մի՛ վախնաք, ձեզի աւետիս մը պիտի տամ,  
որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ:  
Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է»:  
(ՂԿ 2.10-11)*

Կը կանգնիք 2010 տարուան սեմին: Եւ ինչպէս իրաքանչիւր տարեմուտի, անգամ մը եւս, մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը հոգեկան վերանորոգ ցնծութեամբ կը լեցնէ մեր ընտանեկան յարկերն ու մեր ազգային կեանքը:

Ահա դարձեալ պահն է վերապրելու այն հրաշալի դէպքը, երբ դարեր առաջ Փայլուն Աստղը ծագեցաւ Բեթղեհեմի վերեւ, աշխարհին աւետելով հրաշափառ ծնունդը Աստուածորդոյն. ցնծալի աւետիսը առաջին ստացողները եղան դաշտին մէջ գիշերող բարի հովիւները: Լուսաւոր աստղէն ճառագայթող շողերը եւ հրեշտակներուն երգերը շուտով հասան մարդկութեան: Քրիստոսի առաքելներուն շնորհիւ, Բեթղեհեմի փարոսէն ճառագայթող լոյսը հասաւ նաեւ Հայաստան Աշխարհի ու ահաւասիկ դարերէ ի վեր կ'առաջնորդէ մեր ժողովուրդին ու հայրենիքին երթը:

Եկէ՛ք, ուրեմն, Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան տօնը դիմաւորենք դարերէն մեզի հասած գեղեցիկ մեղեդիով, փառաբանենք զԱստուած, խաղաղութիւն, հաճութիւն ցանկանք մարդկութեան եւ աշխարհին: Հրեշտակներուն երգը թող յուշարարը ըլլայ մեր ուխտին վերանորոգման, քրիստոնէական առաքինութիւններով լիցքաւորուած կեանք մը ապրելու մեր յանձնառութեան եւ մեր դարաւոր աւանդներուն հաւատարմութեան.

**Փառք ի բարձունս Աստուծոյ  
եւ յերկիր խաղաղութիւն  
ի մարդիկ հաճութիւն:**

(ՂԿ 2.14)

Սիրելիներ,

Ս. Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը տօնն է Յոյսի ծնունդին, նոր յոյսի մը, որ մեր Փրկիչը՝ Յիսուս Զրիստոս մեզի շնորհեց իր Հրաշափառ Ծնունդով:

Բեթլեհեմի համեստ մսուրէն աւելի քան երկու հազար տարի առաջ ճառագայթած լոյսը տարածուեցաւ մութ աշխարհին վրայ ու լուսաւորեց զայն: Այս սուրբ ու խորհրդաւոր գիշերին սկիզբ առաւ Աստուծոյ փրկագործութեան ծրագիրը մարդկութեան համար: Աստուած իր Միածինը պարգեւեց մարդկութեան, որպէսզի Ան կրէ մեր մեղքերուն ծանրութիւնը եւ փրկութիւն բերէ մեզի: Բանը մարմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ: Ս. Ծննդեան տօնը մեզի կը յիշեցնէ, որ Տէրը ինքզինք մեզի նուիրեց Մանուկ Յիսուսի միջոցով ու մեզի շնորհեց լոյս մը, զոր ոչ մէկ խաւար կրնայ մթազնել:

Անցնող տարին աշխարհի ժողովուրդներուն ու համայն մարդկութեան համար եղաւ դժուար շրջան մը: Տնտեսական տագնապը անկայուն դարձուց շատերու կեանքը: Աւելին, Հայ ժողովուրդը անորոշութեան մատնուեցաւ մեր Դատին ու ազգային պահանջներուն դիտանկիւնէն:

2010 տարին կը նշէ Յեղասպանութեան 95րդ տարեդարձը: Պարզ է որ հիասթափուած զգանք, որովհետեւ տասմանեակներու մեր պայքարին ընթացքը մատնուած է անորոշութեան: Որեւէ ատենէ աւելի ա՛յսօր պէտք է մեր յոյսերը կապենք մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի, որովհետեւ **«Օրհնեալ է այն մարդը, որ կը յուսայ Տիրոջ, եւ որուն յոյսը նոյնինքն Տէրն է»** (Երեմիա 17.7): Տէրը դարեր շարունակ պահպանած է մեզ ու առաջնորդած է մեր ուղին, եւ մենք կրնանք վստահ ըլլալ, որ այս հանգրուանին եւս, Ան պիտի մնայ մեր առաջնորդը եւ պիտի գործէ ի նպաստ մեր նպատակներուն ու երազներուն իրականացման: Յոյս չընենք մարդոց վրայ, որոնք կրնան յուսախաբ ընել մեզ, այլ մեր յոյսը դնենք մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի վրայ, որովհետեւ Աստուած գիտէ մեր կարիքները ու պիտի հոգայ զանոնք: Ինչպէս որ Պօղոս Առաքեալ կը հաստատէ հռոմայեցիներուն ուղղուած իր նամակին մէջ, **«Յոյսը երբեք ամօթով չի ձգեր, որովհետեւ Աստուծոյ սերը տեղ գտած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի տրուած Սուրբ Հոգիին միջոցաւ»** (Հռ 5.5):

Սիրելի հաւատացեալներ,

Նուէրներու փոխանակման այս օրերուն, եկէ՛ք, անգամ մը եւս յիշենք, որ արժանացած ենք ամենէն մեծ նուէրին՝ Յիսուս Զրիստոսի ներկայութեան ու բերած յոյսին մեր կեանքերուն մէջ: Այս ճշմարտութիւնը յիշենք ո՛չ միայն Ամանորի ու Ս. Ծննդեան հրաշափառ տօնի օրերուն, այլ նաեւ տարուան բոլոր օրերուն: Յիշենք, որ Ան, միայն Ան է մեր յոյսն ու աշխարհի լոյսը: Բոլորս ալ կը դիմագրաւենք խաւարի պահեր, սակայն գօտեպնդուի՞նք այն գիտակցութեամբ, որ Տէրը մեզի պարգեւած է ամենէն մութ պահերն անգամ յաղթահարող յոյսը:

Ս. Ծննդեան ու Աստուածայայտնութեան այս հրաշափառ տօնին առիթով, մենք մեր օրհնութիւնները, քաջամոռոջութեան ու գործոց բարեաց

բարեմաղթութիւնները կը բաշխենք մեր հոգեւոր եղբայրներուն, Ազգային Վարչութեան, Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամներուն, կրթական մշակներուն, հայկական միութեանց ու կազմակերպութեանց անդամներուն, ծխական շրջաններու մեր ժողովուրդին ու բարեկամներուն:

Կ'աղօթենք, որ Ս. Ծննդեան յոյսը վերածնի մեր հոգիներուն ու սրտերուն մէջ, Յիսուս Բրիստոսի լոյսը շողարձակուի մեր մէջ ու մեր կեանքերը լեցնէ խաղաղութեամբ: **«Արդ, յոյսի պարգեւիչ Աստուածը թող ձեզ ամբողջական ուրախութեամբ եւ խաղաղութեամբ լեցնէ՝ իրեն հանդէպ ունեցած ձեր հաւատքովը, որպէսզի Սուրբ Հոգիին զօրութեամբ յոյսով առատանաք»** (Հռ 15.13):

***Շնորհաւոր Նոր Տարի,  
Բրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,  
Օրհնեալ Է յայտնութիւնն Բրիստոսի:***

Սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ  
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ամանոր եւ Ս. Ծնունդ, 2010

## **PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS MESSAGE**

### **THE HOPE OF CHRISTMAS: A GREAT SOURCE OF JOY**

***“Do not be afraid, for behold, I bring you good tidings of great joy which will be to all people. For there is born to you this day in the city of David a Savior, who is Christ the Lord”. (Luke 2:10-11)***

As we prepare to welcome the New Year 2010, we find ourselves once again spiritually fulfilled by the uplifting and inspiring message of the Nativity and Theophany of our Lord Jesus Christ.

This is the time when we relive the miraculous events of centuries ago when the bright star shined above Bethlehem heralding the Glorious Birth of our Savior. The first to receive the good tidings were the humble shepherds in the fields, though soon that bright star illuminated the world and the good news was spread to all mankind by the angels' songs. The Light also reached the Armenian nation, where for centuries it has guided our people and our path.

Let us welcome the Feast of the Nativity and Theophany with hymns passed down to us throughout the centuries, praising our Lord and praying for peace and harmony for mankind. Let this be a time of renewal of our vow to live a life of faithfulness to our Christian values and ancient traditions, and together let us proclaim,

***“Glory to God in the highest,  
And on earth peace, goodwill toward men!” (Luke 2:14)***

Dear Beloved,

The Feast of the Nativity and Theophany of our Lord is a celebration of the birth of hope, a new hope that our Savior Jesus Christ provided with His Glorious Birth.

In that humble manger in Bethlehem over two thousand years ago, hope permeated the world as the Light shined from the manger and illuminated a darkened world. What transpired on that silent and holy night was the beginning of God's redemptive plan for mankind. God sent His only begotten Son to bear our burdens and to sustain us; the Word became flesh and lived among us. Christmas is a reminder that the Lord gave Himself to us in Baby Jesus and brought us a Light that no darkness can extinguish.

The past year has been a trying time for all peoples around the world. The global economic climate has left many unsettled and despondent. Furthermore, the Armenian people were thrust into a state of uncertainty about the future of our cause and our nation.

The year 2010 marks the 95<sup>th</sup> anniversary of the Genocide. It is easy to feel disparaged as it seems unclear what the outcome of our decades-long struggle for our national rights will be. Now more than ever we must continue to place our hopes in our Lord Jesus Christ, for ***“Blessed is the man who trusts in the Lord, and whose hope is the Lord” (Jeremiah 17:7).*** The Lord has sustained us and guided our path as a people for centuries and we can be certain that at this crossroads too, He will lead us as we labor for our goals and our dreams. Let us not place false hopes on those who will disappoint, but rather in our Lord Savior Jesus Christ, for God knows and will meet our needs. As the Apostle Paul asserts in Romans, ***“hope does not disappoint, because the love of God has been poured out in our hearts by the Holy Spirit who was given to us” (Romans 5:5).***

Dear Faithful,

In this season of gift giving, let us remember that we have been bestowed the greatest gift of all; Jesus Christ’s presence and hope in our lives. Let us remember not only during Christmastime but throughout the year that He, and only He, is our hope and the Light of the world. We all face times of darkness; however let us rejoice in that the Lord has given us enduring hope even in our darkest hours.

On this glorious occasion, I convey my blessings and extend my well wishes for health and prosperity to our clergy, Executive Council, delegates, parishes’ representatives, educators, members of sister organizations, faithful parishioners, and friends.

I pray that the Christmas hope is born anew in all of us and for the Light of Jesus Christ to radiate in us and fill our lives with peace. ***“Now may the God of hope fill you with all joy and peace in believing, that you may abound in hope by the power of the Holy Spirit”. (Romans 15:13)***

***A happy and blessed New Year to you all  
Christ is Born and Revealed***

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian  
Prelate, Western United States

New Year 2010